ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ (2016-2018ԹԹ)





ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Խելամիտ հարկաբյուջետային քաղաքականության նախագծումն ու իրականացումն առանցքային դեր ունի մակրոտնտեսական կայունության ապահովման գործում՝, հիմքեր ստեղծելով տնտեսության զարգացման և երկարաժամկետ տնտեսական աճի ապահովման համար: Այս ուղղությամբ մեր ջանքերն ուղղվել են հարկաբյուջետային քաղաքականության հենասյուների ամրապնդմանը, հարկաբյուջետային քաղաքականության վերլուծության գործիքակազմի կատարելագործմանը, մակրոտնտեսական ախտորոշման համակարգի կատարելագործմանը և հարկաբյուջետային թափանցիկության բարձրացմանը:

1. **Անցում կանոնների վրա հիմնված հարկաբյուջետային քաղաքականության**

Հիմնախնդիրներ

- Նախկին կանոնների կոշտություն
- Հարկաբյուջետային քաղաքականության պրոցիկլայնության տարրերի առկայություն
- Արդյունավետ հարկաբյուջետային քաղաքականության և ծախսերի օպտիմալ կառուցվածքի համար ուղենիշերի բացակայություն

→

Գործողություններ

- Գործող կանոնների արդիականացում և նոր կանոնների ներդրում՝ «ՀՀ բյուջետային համակարգի մասին» և «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքներում համապատասխան փոփոխությունների միջոցով

→

Նպատակ

- Հարկաբյուջետային քաղաքականության արդյունավետության բարձրացում՝ մակրոտնտեսական կայունության ապահովման (տնտեսությունում խեղումների բացառում) և երկարաժամկետ տնտեսական աճի ապահովման գործում

✓ Լավ նախագծված հարկաբյուջետային կանոնները և դրա հիման վրա քաղաքականության ծրագրավորումն ու իրագործումն էապես ամրացնում են մակրոտնտեսական կայունությունը և նպաստում տնտեսական զարգացմանը: Այլ կերպ ասած, հարկաբյուջետային կանոններն ապահովում են խելամիտ հարկաբյուջետային քաղաքականության ուղղության մշտապես պահպանում, որը զերծ է քաղաքական թիմերի փոփոխության ազդեցությունից: Հեռանկարում

պարտքի կայունացմանն ուղղված, սակայն տնտեսական աճը չտուգանող նոր հարկաբյուջետային կանոնների ներդրման նպատակով 2017 թվականից մշակվել և ներդրվել է հարկաբյուջետային կանոնների փաթեթ, որով վերանայվել են պարտքի և դեֆիցիտի գործող կանոնները, ինչպես նաև պետական բյուջեի ծախսերի մասով սահմանվել են նոր հարկաբյուջետային կանոններ:

2. Հարկաբյուջետային քաղաքականության վերլուծության գործիքակազմի կատարելագործում



Հարկաբյուջետային քաղաքականությունը որպես մակրոտնտեսական կառավարման կարևոր գործիք պետք է ունենա ակադեմիական աշխարհում ընդունված տեսությունների վրա հիմնված կանխատեսումների և վերլուծությունների արդի գործիքակազմ: Դա բարձրացնում է հարկաբյուջետային քաղաքականության վերաբերյալ կանխատեսումներ կատարելու և որոշումներ ընդունելու հուսալիությունը: Այս առումով արբանյակային մոդելների զարգացումից զատ ֆինանսների նախարարությունում ներդրվել է Գլոբալ ինտեգրված դրամավարկային և հարկաբյուջետային մոդելի (GIMF):

- Գլոբալ ինտեգրված դրամավարկային և հարկաբյուջետային մոդելի (GIMF) միջոցով գնահատվում է ՀՀ տնտեսության վրա հարկային և ծախսային քաղաքականությունների փոփոխությունների միջնաժամկետ և երկարաժամկետ ազդեցությունը:
- Տնտեսության վրա հարկաբյուջետային քաղաքականության բազմակողմանի ազդեցությունների գնահատման նոր գործիքակազմի ներդրման նպատակով ՀՀ ֆինանսների նախարարությունում մեկնարկել է նաև մակրոտնտեսական քաղաքականության ոլորտում Արժույթի միջազգային հիմնադրամի հետ ՀՀ ֆինանսների նախարարության համագործակցության երկամյա

ծրագիրը: Ծրագրի շրջանակներում կազմակերպվել են «Մակրոէկոնոմետրիկ կանխատեսում և վերլուծություն» և «Դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունների վերլուծություն դինամիկ ստոխաստիկ ընդհանուր հավասարակշռության (DSGE) մոդելի միջոցով» թեմաներով դասընթացներ: Դասընթացներին զուգահեռ ԱՄՀ փորձագետների հետ քննարկումների արդյունքում ընտրվել է հարկաբյուջետային քաղաքականության վերլուծության մոդելը և մեկնարկել են դրա մշակման և ներդրման ուղղությամբ պրակտիկ աշխատանքները:

- ՀՀ ֆինանսների նախարարության և ՌԴ ֆինանսների նախարարության միջև պետական ֆիանսների կառավարման ոլորտում երկկողմ համագործակցության շրջանակներում նախատեսվում է 2017-2020 թվականներին մշակել դինամիկ ստոխաստիկ ընդհանուր հավասարակշռության (DSGE) մոդել ՀՀ ֆինանսների նախարարության համար: Այդ կապակցությամբ 2017 թվականին և 2018 թվականի առաջին եռամսյակի ընթացքում կազմակերպվել են սեմինար-դասընթացներ և աշխատանքային քննարկումներ, տրվել է մոդելի կառուցման աշխատանքային մեկնարկը:

3. Մակրոտնտեսական վերլուծությունների իրականացում՝ ՀՀ տնտեսության կարևոր զարգացումների վերաբերյալ.



Որպես ընդունված կանոն, կառավարության ծրագրերի հիմքում դրվող տնտեսական քաղաքականության ուղղություններին պետք է նախորդի տվյալ երկրի տնտեսության մանրակրկիտ ախտորոշումը, որն ի ցույց կդնի թե ինչ խնդիրներ ունի տնտեսությունը և ինչպիսին պետք է լինի երկարաժամկետ տնտեսական քաղաքականության բնույթը: Այս առումով Ֆինանսների նախարարությունը 2016թ-ի վերջին և 2017թ-ի սկզբին կատարեց խորը և համապարփակ տնտեսության ախտորոշման վերլուծություն, որն արժանացավ մակրոտնտեսական քաղաքականության մեջ մասնագիտացված միջազգային ֆինանսական կազմակերպությունների (ԱՄՀ, ՀԲ, ԱԶԲ և այլն) դրական գնահատականի: Այս առումով՝

✓ Ախտորոշվել և բացահայտվել են ՀՀ տնտեսության առանցքային խնդիրները, մշակվել են այդ խնդիրների լուծմանն ուղղված տնտեսական քաղաքականության մոտեցումներ: Դրանց հիման վրա մշակվել է հայեցակարգային փաստաթուղթ

✓ Իրականացվել է ՀՀ կառավարության պարտքի կայունության վերլուծություն միջնաժամկետ և երկարաժամկետ հորիզոնի համար: Տրվել են գնահատականներ ՀՀ կառավարության պարտքը կայունացնող, ինչպես նաև վճարունակության ու իրացվելիության ցուցանիշների վերաբերյալ:

4. Հարկաբյուջետային թափանցիկության գնահատում (Fiscal Transparency Evaluation)

Հիմնախնդիրներ

- Հարկաբյուջետային քաղաքականության թափանցիկության վերաբերյալ համակողմանի և ամբողջական գնահատման անհրաժեշտություն

Գործողություններ

- ՀՀ ֆինանսների նախարարությունը նախաձեռնել է ԱՄՀ-ի տեխնիկական աջակցությամբ ՀՀ հարկաբյուջետային թափանցիկության գնահատման գործընթացc

Նպատակ

- Հարկաբյուջետային կառավարման տարբեր ոլորտների թափանցիկության խնդիրների բացահայտում և դրանց հաղթահարման գործողությունների ծրագրի մշակում

✓ ՀՀ ֆինանսների նախարարությունը ԱՄՀ-ի տեխնիկական աջակցությամբ նախաձեռնել է ՀՀ հարկաբյուջետային թափանցիկության գնահատման գործընթացը (Fiscal Transparency Evaluation): Այդ կապակցությամբ 2018 թվականին ԱՄՀ-ի ֆիսկալ թափանցիկության գնահատման առաքելության փորձագետների մասնակցությամբ կազմակերպվել են հանդիպումներ տարբեր գերատեսչությունների հետ, ինչի արդյունքում մշակվել է «ՀՀ Հարկաբյուջետային թափանցիկության գնահատում» տեխնիկական աջակցության հաշվետվության նախագիծը: Նախագծում ախտորոշվել և բացահայտվել են ՀՀ ֆիսկալ թափանցիկության գործելակերպերի ուժեղ և թույլ կողմերը և ներկայացվել են առաջարկություններ առաջնահերթ

համարվող ոլորտներում Հայաստանի ֆիսկալ թափանցիկության հետագա բարելավման նպատակով:

Վերջին 2 տարիներին իրականացված խելամիտ հակացիկլիկ մակրոտնտեսական քաղաքականությունների արդյունքում տեղի է ունեցել մակրոտնտեսական կայունության վերականգնում, որը խախտվել էր արտաքին խոշոր շոկերի արդյունքում:



ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

2016 թվականից նոր կառավարությունը խնդիր էր դրել աստիճանաբար դանդաղեցնել ՀՀ կառավարության պարտք / ՀՆԱ ցուցանիշի աճի տեմպը, որը 2014-2016թթ. ընթացքում աճել էր շուրջ 13 տոկոսային կետով, իսկ միայն 2016թ-ին 7.7 տոկոսային կետով (այս ցուցանիշի միանգամից նվազեցումը կտուգաներ տնտեսական աճը:





«Պետական պարտք» խորագրով սեմինար Ծաղկաձորում՝ տնտեսական ոլորտի լրագրողների համար

2017թ-ին կառավարությանը հաջողվեց իր առջև դրած խնդիրն իրագործել, այն է հարկաբյուջետային կոնսոլիդացիայի արդյունքում պարտք/ՀՆԱ ցուցանիշի աճի տեմպն էապես նվազեցվեց և պարտք/ՀՆԱ ցուցանիշն աճեց ընդամենը 1.8 տոկոսային կետով: Իսկ արդեն 2018թ-ին հարկաբյուջետային ծրագրի իրականացման պայմաններում նախատեսվում է պարտք/ՀՆԱ ցուցանիշի նվազեցում՝ շուրջ 1.3 տոկոսային կետով:

Վերոնշյալ հարկաբյուջետային քաղաքականությունն իրագործվել է պարտքի խելամիտ կառավարման ուղենիշներին համահունչ: Ավելին <<Առաջիկա տարվա ընթացքում մարվող ՊՊ-երի կշիռը ՊՊ-երի ծավալի մեջ (տարեվերջին)>> ցուցանիշը, որը բնութագրում է պարտքի կառավարման ոլորտում կառավարության իրացվելիության հետ կապված ռիսկերը (ընդհանուր պարտքի մեջ որքան մեծ է ընթացիկ տարվա մարումները, այդքան կառավարությունը կարող է ընթացիք իրացվելիության դժվարություններ

ունենա) 2016թ. 22.9%-ից նվազել է 2017թ. 16.4%-ի՝ գտնվելով իրացվելիության սահմաններում: Ընդ որում այս միտումը շարունակվել է նաև 2018թ-ի ընթացքում:

ՀՀ կառավարության պարտքի կառավարման ուղենշային ցուցանիշները

	Ուղենիշ	2016թ. փաստ	2017թ. փաստ	30.04.2018թ. փաստ
Վերաֆինանսավորման ռիսկ				
Մինչև մարում միջին ժամկետը	8 – 11 տարի	9.3	9.0	9.0
Առաջիկա տարվա ընթացքում մարվող ՊՊ-երի կշիռը ՊՊ-երի ծավալի մեջ (տարեվերջին)	առավելագույնը 20%	22.9	16.4	11.6
Տոկոսադրույքի ռիսկ				
Ֆիքսված տոկոսադրույքով պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ	առնվազն 80%	87.5	86.5	86.5
Փոխարժեքի ռիսկ				
Ներքին պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ	առնվազն 20%	20.9	20.7	21.3

Արդյունքում՝ պետական պարտատոմսերի եկամտաբերությունը ամբողջ կորի երկայնքով նվազել է 3-4 տոկոսային կետով:



ՀՀ կառավարության պարտքի կառավարման ՀՀ կառավարության վարած քաղաքականության արդյունքում միջազգային կապիտալի շուկաների արձագանքը չի ուշացել և Հայաստանի թողարկած եվրապարտատոմսերի ոչ միայն տոկոսադրույքներն են այս ժամանակահատվածում նվազել, այլ նաև միջազգային ուղենշային պարտատոմսերի նկատմամբ սփրեդն է նվազել, ինչը նշանակում է, որ աճել է մեր երկրի նկատմամբ վստահությունը:



Աղբյուրը՝ Բլումբերգ



Աղբյուրը՝ Բլումբերգ

Արտաքին պետական պարտքը բնութագրող ցուցանիշներ

Արտաքին պետական պարտքի ԶՆԱ / ՀՆԱ *											
Առավել ծանր պարտքի բեռ ունեցող երկրներ									> 80%		
Միջին պարտքի բեռ ունեցող երկրներ									48% - 80%		
Նվազ պարտքի բեռ ունեցող երկրներ									< 48%		
	2008թ.	2009թ.	2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.	2015թ.	2016թ.	2017թ.	2018թ.
Հայաստանի Հանրապետություն	8.5	26.1	28.0	29.8	32.1	33.6	25.7	34.2	38.0	40.9	39.3

Արտաքին պետական պարտքի ԶՆԱ / Արտահանում *											
Առավել ծանր պարտքի բեռ ունեցող երկրներ									> 220%		
Միջին պարտքի բեռ ունեցող երկրներ									132% - 220%		
Նվազ պարտքի բեռ ունեցող երկրներ									< 132%		
	2008թ.	2009թ.	2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.	2015թ.	2016թ.	2017թ.	2018թ.
Հայաստանի Հանրապետություն	51.2	144.9	117.5	110.2	116.8	118.6	89.8	114.9	114.3	110.5	103.9

Արտաքին պետական պարտքի սպասարկում / Արտահանում **											
Առավել ծանր պարտքի բեռ ունեցող երկրներ									> 30%		
Միջին պարտքի բեռ ունեցող երկրներ									18% - 30%		
Նվազ պարտքի բեռ ունեցող երկրներ									< 18%		
	2008թ.	2009թ.	2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.	2015թ.	2016թ.	2017թ.	2018թ.
Հայաստանի Հանրապետություն	2.8	4.6	4.1	3.7	8.2	27.3	8.0	12.5	6.6	6.8	7.7

Արտաքին պետական պարտքի տոկոսավճար / Արտահանում											
Առավել ծանր պարտքի բեռ ունեցող երկրներ									> 20%		
Միջին պարտքի բեռ ունեցող երկրներ									12% - 20%		
Նվազ պարտքի բեռ ունեցող երկրներ									< 12%		
	2008թ.	2009թ.	2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.	2015թ.	2016թ.	2017թ.	2018թ.
Հայաստանի Հանրապետություն	0.6	1.8	2.0	1.8	1.9	1.6	2.3	3.3	3.6	3.4	3.5

Արտաքին պետական պարտք / Արտահանում											
Առավել ծանր պարտքի բեռ ունեցող երկրներ									> 275%		
Միջին պարտքի բեռ ունեցող երկրներ									165% - 275%		
Նվազ պարտքի բեռ ունեցող երկրներ									< 165%		
	2008թ.	2009թ.	2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.	2015թ.	2016թ.	2017թ.	2018թ.
Հայաստանի Հանրապետություն	81.1	190.3	149.3	130.2	128.2	123.6	114.1	137.6	137.3	128.6	122.3

Արտաքին պետական պարտք / ՀՆԱ											
Սահման									50.0%		
	2008թ.	2009թ.	2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.	2015թ.	2016թ.	2017թ.	2018թ.
Հայաստանի Հանրապետություն	13.5	34.3	35.6	35.2	35.2	35.1	32.6	40.9	45.6	47.6	46.3

Արտաքին պետական պարտքի սպասարկում / Բյուջեի եկամուտներ ***											
Միջին ցուցանիշ									22.5%		
	2008թ.	2009թ.	2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.	2015թ.	2016թ.	2017թ.	2018թ.
Հայաստանի Հանրապետություն	2.1	3.8	4.4	4.3	10.2	32.9	9.7	16.0	9.4	11.3	13.5

** 2014-2017թ. արտաքին պետական պարտքի ՀՆԱ-ի հաշվարկման մեթոդաբանությունը փոփոխվել է ԱՄՀ-ի հետ գործող ծրագրին համապատասխան և որպես զեղչման տոկոսադրույք է կիրառվել 5% դրույքաչափը:*

*** նույն ցուցանիշն առանց 2013թ. վաղաժամկետ մարված ռուսական վարկի գումարի՝ 456.5 մլն ԱՄՆ դոլար և 2015թ. արտարժութային պետական պարտատոմսերի հետգնման գումարի՝ 199.9 մլն ԱՄՆ դոլար կազմել է համապատասխանաբար 8%, 6% 13% և 6%:*

**** նույն ցուցանիշն առանց 2013թ. վաղաժամկետ մարված ռուսական վարկի գումարի՝ 456.5 մլն ԱՄՆ դոլար և 2015թ. արտարժութային պետական պարտատոմսերի հետգնման գումարի՝ 199.9 մլն ԱՄՆ դոլար կազմել է համապատասխանաբար 15%, 11% 15% և 8%:*

ՀՀ կառավարության պարտքը տարիների ընթացքում ունեցել է աճի միտում, քանի որ պետական բյուջեները ծրագրվել և կատարվել են պակասուրդով: Սակայն, պարտքի մակարդակը պատմականորեն գտնվել է ցածր մակարդակում, ինչը հնարավորություն է ընձեռել տնտեսական ճգնաժամերի ընթացքում, բացասական զարգացումներին դիմակայելու և տնտեսությանը խթանելու նպատակով, լրացուցիչ պարտք ներգրավել և իրականացնել խթանող հարկաբյուջետային քաղաքականություն: Այդուհանդերձ ՀՀ կառավարության պարտքն այսօր էլ գտնվում է միջազգայնորեն ընդունված նվազ պարտքային բեռի շրջանակներում, ինչն ապահովում է մեր երկրի բոլոր վարկատուների վստահությունը Հայաստանի վարկունակության նկատմամբ և պատրաստակամությունը՝ շարունակելու աշխատել մեզ հետ:

ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ԵՎ ԳԱՆՁԱՊԵՏԱՐԱՆ

Բյուջեների նախագծերի կազմման ոլորտում

Բյուջեի ծրագրերի (տարեկան և միջնաժամկետ) մշակումը շարունակական գործընթաց է սակայն կարևոր է, որ տարեց տարի ուժեղացվի արդյունքային ճիշտ ցուցանիշների և միկրոմակարդակում հարկաբյուջետային գրագետ կանոնների վրա հիմնված ծրագրավորման համակարգը: Այս առումով՝

1. Մշակվել են ՀՀ 2018-2020թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի և ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի նախագծերը (որոնք 06.07.17թ. և 08.12.17թ.-ին ընդունվել են համապատասխանաբար կառավարության և ազգային ժողովի կողմից):

Առկա բյուջետային խիստ սահմանափակումների պայմաններում նշված փաստաթղթերով շարունակվել է հարկաբյուջետային կոնսոլիդացիան՝ նպատակ ունենալով կանխատեսվող հորիզոնում հարկաբյուջետային քաղաքականությունն ուղղել "ոսկե կանոնի[1]" վերականգնմանը և այդպիսով հիմքեր ստեղծել երկարաժամկետ աճի, պարտքի կայունության ապահովման ու սոցիալական պարտավորությունների լավագույնս կատարման համար:

2. Շարունակվել են բյուջետային գործընթացի ավանդական ձևաչափից դեպի «փողի դիմաց արժեք» հենքի վրա ձևավորվող «ծրագրային» բյուջետային գործընթացին անցնելու համար համապատասխան իրավական հիմքերի ստեղծման ուղղությամբ աշխատանքները՝ նպատակ ունենալով բարձրացնել բյուջետային ծրագրեր իրականացնող պետական մարմինների և ընդհանրապես կառավարության **<u>հաշվետվողականությունն ու պատասխանատվությունը</u>** պետական ֆինանսների արդյունավետ և նպատակային օգտագործման համար: Մասնավորապես, մշակվել և ԱԺ *կողմից* ***ընդունվել են «ՀՀ բյուջետային համակարգի մասին» և «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքների նախագծերը,*** *որոնցով սահմանվել են, որ.*

– ***ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծից սկսած պետական բյուջեների նախագծերը Ազգային ժողով կներկայացվեն ծրագրային ձևաչափով:***

---

[1] Միջազգային ակադեմիական աշխարհում հարկաբյուջետային քաղաքականության "Ոսկյա Կանոն" անվանում են այն իրավիճակը երբ վարկային միջոցներն ուղղվում են կապիտալ բնույթի ծախսերին և տնտեսական ներուժի մեծացմանը, իսկ ընթացիկ բնույթի ծախսերը ֆինանսավորվում են հիմնականում սեփական միջոցների հաշվին: Այն սովորաբար չափվում է կապիտալ ծախսեր/պակասուրդ գործակցով,. Եթե այն 1-ից բարձր է ասում են որ ոսկյա կանոնը պահպանված է:

– ***Պետական բյուջեի որևէ ծախսային ծրագիր պետք է վերագրվի բացառապես մեկ պետական մարմնի՝ նպատակ ունենալով որոշակիացնել ծրագրերի պատասխանատուների իրավունքներն ու պարտականությունները:***

– ***Ծրագրի իրականացման աստիճանը գնահատվելու է ոչ թե հատկացված միջոցների ծախսման ծավալից ելնելով, այլ ծրագրի արդյունքներին հասնելու համար իրականացման ենթակա միջոցառումների ոչ ֆինանսական ցուցանիշներով (ԿՀՑ-երով):***

Ընդ որում, ինչպես նշված օրենքների, այնպես էլ պետական բյուջեով նախատեսված ծրագրերի արդյունքային կատարողական (ոչ ֆինանսական) ցուցանիշների մշակման գործընթացներում ներգրավված են եղել ոչ միայն գործադիրը, այլ նաև Ազգային ժողովի պատգամավորները՝ ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի համակարգմամբ:

3. Քայլեր են ձեռնարկվել հանրային միջոցների կառավարման ոլորտում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգերում գործող իրավաբանական անձանց՝ ***ՊՈԱԿ-ներում և ՀՈԱԿ-ներում, հիմնադրամներում և բաժնետիրական ընկերություններում ֆինանսական կարգապահական և ռեսուրսների օգտագործման թափանցիկության ապահովման համար լրացուցիչ իրավական հիմքեր ստեղծելու նպատակով***: Մասնավորապես՝ մշակվել և ԱԺ կողմից ընդունվել են «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Հիմնադրամների մասին» և «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքների նախագծերը: Ըստ այդ օրենքների, ***ՊՈԱԿ-ների հաշիվները առևտրային բանկերից, ըստ Կառավարության կողմից սահմանված ժամանակացույցի, մինչև 2018 թվականի ավարտը տեղափոխվելու են գանձապետարան և նրանց նկատմամբ 2019 թվականից սկսած կիրառվելու է բյուջետային հիմնարկների հաշիվների նկատմամբ կիրառվող նախնական հսկողություն, ինչն էապես կբարձրացնի բյուջետային կարգապահությունը:***

Բացի այդ իրավական դաշտում հնարավորություն է ստեղծվել ՀՈԱԿ-ների, պետական և տեղական ինքնակառավարման համակարգում գործող հիմնադրամների և բաժնետիրական ընկերությունների հաշիվները, անհրաժեշտության դեպքում գանձապետարանում բացելու համար:

4. ***Քայլեր են ձեռնարկվել 2019 թվականից պետական ծախսերը կազմելու ավտոմատացված համակարգ ներդնելու ուղղությամբ***: Մասնավորապես՝ արդեն իսկ անցկացվել է պետական ծախսերը կազմելու գործընթացի ավտոմատացված համակարգ մշակելու և վերջինիս պետական կառավարման համակարգում գործող այլ ավտոմատացված համակարգերի հետ ինտեգրելու՝ տեղեկատվության փոխանակման հնարավորություն ստեղծելու աշխատանքների ձեռքբերման մրցույթ, կնքվել է պայմանագիր: 2018 թվականի մայիսի 5-ին ՀՀ ֆինանսների նախարարությունում ծախսակազմման ավտոմատացված համակարգի ձեռքբերման նպատակով 2017 թվականին հայտարարված մրցույթի արդյունքում կնքված պայմանագրի շրջանակում մատակարար կազմակերպությունը ներկայացրեց կատարված աշխատանքները:

Ըստ այդմ, մատակարարի կողմից գնահատվել են բյուջետային ծախսերի ծրագրերի կազմման գործընթացները, հստակեցվել է ավտոմատացված համակարգի տրամաբանական կառուցվածքն ու ճարտարապետությունը և արդյունքում մշակվել է WEB-ի վրա հիմնված ունիվերսալ համակարգչային ծրագիր, որը յուրաքանչյուր ծախսող միավորի (առաջնային օղակից մինչև ֆինանսների նախարարություն) համար՝ առանց ծրագրավորողների ներգրավման կամ ծրագրում փոփոխություններ կատարելու, հնարավորություն է տալիս.

4.1. ձևավորել ձևաչափ և դրանով համակարգ ներածել պետական բյուջեի յուրաքանչյուր ծախսատեսակի չափը հաշվելու համար անհրաժեշտ տվյալները,
4.2. ձևավորել ձևաչափ և դրանով համակարգ ներածել կանոնները (օրենսդրությունից բխող), որոնց միջոցով պետք է հաշվարկվեն անհրաժեշտ գումարների մեծությունները:
4.3. սահմանել «գլոբալ փոփոխականներ», որոնք միասնական կերպով կարող են օգտագործվել բոլոր ծրագրերի համար (օրինակ՝ նվազագույն աշխատավարձ, էլեկտրաէներգիայի սակագին և այլն),
4.4. կազմակերպել օգտատերերի հաշվառում՝ յուրաքանչյուրի հստակ իրավասության սահմանմամբ (տվյալներ մուտքագրելու, հաստատելու և այլն),
4.5. ապահովել օգտատերերի կողմից համակարգում կատարված գործողությունների հաշվառումը, և
4.6. արդյունքում ձևավորել գործող կարգավորումների և վարվող քաղաքականության շրջանակում պետական բյուջեի ծախսերի հաշվարկային կարիքը:
5. Մշակվել և կառավարության կողմից հաստատվել է «ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, ի թիվս այլ միջոցառումների ներդրվել են **<u>բյուջետային կարգապահության</u>** ուժեղացմանն ուղղված մի շարք կանոններ, որոնք վերաբերում են մասնավորապես

5.1 **<u>Պետական գնումների մրցույթների արդյունքում առաջացող տնտեսումների տնօրինմանը</u>** - գնումների գործընթացի մրցույթների արդյունքներով տնտեսված գումարների 70 տոկոսը, տվյալ ծրագրի կատարող պետական մարմնի առաջարկությամբ ուղղվում են Պահուստային ֆոնդ, եթե կառավարության կամ վարչապետի կամ ավելի բարձր որևէ իրավական ակտով այլ բան չի նախատեսվում: Նշված կանոնը չի տարածվում պաշտպանության նախարարության և ազգային անվտանգության ծառայության վրա:

5.2 **<u>Արտաքին աղբյուրներից ստացվող վարկային միջոցների հաշվին իրականացվող ծրագրերի պետական բյուջեով նախատեսված չափաքանակների շրջանակներում իրականացմանը</u>** - արտաքին աջակցությամբ իրականացվող նպատակային ծրագրերի կատարման ընթացքում պետական մարմիններն ապահովում են, որպեսզի ԾԻԳ-երը ստանձնեն բացառապես այնքան պարտավորություններ, որքան այդ ծրագրերի համար 2017թ. բյուջեում ֆինանսական միջոցներ են նախատեսված, քանի դեռ բյուջեում փոփոխությունների կամ լրացումների ճանապարհով այլ բան չի նախատեսվել:

5.3 **Պահուստային ֆոնդից միջոցների հատկացմանը** - պահուստային ֆոնդից լրացուցիչ միջոցների հատկացման կարիք առաջանալու դեպքում, առաջնահերթության կարգով քննարկվում է անհրաժեշտ հատկացումը տվյալ կարիքին համապատասխան ոլորտի ծրագրերում գերակայություններն ու ծրագրերի հրատապությունը վերանայելու և դրանց հաշվին միջոցները հատկացնելու հնարավորությունը,

5.4 Կապիտալ ծախսերից ընթացիկ ծախսեր վերաբաշխումը և մի շարք այլ հարցեր:

Բյուջեների կատարման ոլորտում

Բյուջեի կատարման գործընթացների հնարավորինս ավտոմատացումը հնարավորություն է տալիս նվազեցնել մարդկային գործոնի դերակատարությունը և հնարավոր սխալի հավանականությունը, բարձրացնում է գործընթացների թափանցիկությունն ու արդյունավետությունը: Այս առումով՝

Սեմինար՝ «Պետական բյուջեի կառուցվածքը» խորագրով

1. «Գանձապետական գործառնական օր» համակարգի միջոցով ձևակերպվել են միասնական գանձապետական հաշվի բոլոր գործարքները, իսկ «CLIENT–TREASURY» համակարգի միջոցով ապահովվել է ԲԳԿ-ների, ԲՍԿ-ների, ԾԻԳ-երի և համայնքների կողմից էլեկտրոնային փաստաթղթերի մուտքագրումը գանձապետական հաշիվներին: ՀՀ կառավարության 2002թ. հունվարի 18-ի N 48 որոշման 38-րդ կետին համաձայն՝ ***ԾԻԳ-երի կողմից կատարվող ծախսերի նկատմամբ 2017 թվականից սկսած ձեռքով իրականացվող նախնական հսկողության գործառույթը ավտոմատացնելու նպատակով պատրաստվել է ծրագրային ապահովման տեխնիկական առաջադրանք, որի հիման վրա մշակվել է «Գանձապետարանի գործառնական օր» և «CLIENT–TREASURY» համակարգերում ներդրման ենթակա նոր ծրագրային մոդուլ***:

2. «CLIENT–TREASURY» համակարգ մուտքագրվող՝ ***ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հաշվառումն ու հսկողությունը արդյունավետ դարձնելու նպատակով*** կատարվել են ծրագրային ապահովման փոփոխություններ, որի արդյունքում ***նշված փաստաթղթերի հսկողությունն իրականացվում է էլեկտրոնային եղանակով՝ «Գանձապետարանի գործառնական օր» և ՀՀ ԿԱ ՊԵԿ-ում շահագործվող «Հարկատու-3» համակարգերի միջև տվյալների փոխանակման միջոցով***:

3. Բաց կառավարման գործընկերության ՀՀ երրորդ գործողությունների շրջանակներում էլեկտրոնային ***«Ինտերակտիվ բյուջե» համակարգի կատարելագործման նպատակով կատարվել են ծրագրային փոփոխություններ՝ պետական բյուջեի ծախսային մասից բացի ներառելով եկամտային և պակասուրդի ֆինանսավորման մասերը:***

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Երկրի տնտեսական և հարկաբյուջետային քաղաքականությունների վերաբերյալ ճիշտ ընկալման տեսանկյունից կարևոր է գրագետ և հետևողական աշխատանքների իրականացումը միջազգային հարթակներում և գործընկերների հետ:

- ՀՀ ՖՆ կողմից ապահովվել է օտարերկրյա պետությունների և միջազգային զարգացման գործընկերների հետ շարունակական համագործակցությունը: Ակտիվ աշխատանքները շարունակվել են, մասնավորապես, Համաշխարհային բանկի, Ասիական Զարգացման բանկի, Եվրոպական ներդրումային բանկի, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի, Եվրոպական Միության, Զարգացման ֆրանսիական գործակալության, Վերականգնման վարկերի բանկի, Եվրասիական տնտեսական միության, Եվրասիական զարգացման բանկի, Կայունացման զարգացման եվրասիական հիմնադրամի, ինչպես նաև առանձին երկրների հետ երկկողմ համագործակցության ձևաչափով:

2016թ. հոկտեմբերից սկսած, պայմանավորված արտաքին պետական պարտքի առկա շեմով և օրենսդրական սահմանափակումներով, ՀՀ կառավարությունը որդեգրել է միջնաժամկետում պարտքի կայունացմանն ուղղված հարկաբյուջետային կոնսոլիդացիայի քաղաքականություն, ինչի արդյունքում ենթակառուցվածքային ծրագրերի ֆինանսավորման նպատակով նոր վարկային միջոցներ ներգրավվել են միայն բացառիկ դեպքերում: Փոխարենը օտարերկրյա պետությունների և միջազգային կառույցների հետ աշխատանքները գլխավորապես միտված են եղել դրամաշնորհային միջոցների ներգրավմանը (հաշվետու ժամանակաշրջանում ստորագրվել են 14.05 մլն ԱՄՆ

Վարդան Արամյանը Վաշինգտոնում մասնակցել է Արժույթի միջազգային հիմնադրամի և Համաշխարհային բանկի խմբի հանդիպումների պլենար նիստին

դոլար և 25.3 մլն եվրո ընդհանուր արժողությամբ թվով 12 դրամաշնորհային համաձայնագրեր) և ընթացիկ ծրագրերի սահուն ընթացքի ապահովմանը (փոփոխություններ համաձայնագրերում, անհրաժեշտության դեպքում՝ ժամկետների երկարաձգում):

- Համապատասխան աշխատանքներ են տարվել միջազգային դոնոր կազմակերպություններից ՀՀ ՖՆ իրավասության ոլորտներում բարեփոխումների իրականացման նպատակով տեխնիկական աջակցության ներգրավման ուղղությամբ: Նշենք, որ որոշ ուղղություններով արդեն իսկ մեկնարկել են աշխատանքները:
- Մեծապես կարևորվում է նաև միջազգային կառույցների (Համաշխարհային բանկ, Ասիական զարգացման բանկ, Վերականգնման վարկերի բանկ, Եվրոպական Միություն, Զարգացման ֆրանսիական գործակալություն, Եվրասիական զարգացման բանկ, Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամ) հետ աշխատանքները բյուջետային աջակցության միջոցների (վարկային և դրամաշնորհային) ներգրավման ուղղությամբ: Մասնավորապես՝ նշված բյուջետային աջակցության միջոցների ամբողջական և ժամանակին ստացման ապահովման նպատակով իրականացվել է ամենօրյա մշտադիտարկում սահմանված նախապայմանների կատարման նկատմամբ՝ արդյունավետ կերպով ապահովելու համար վարկային համաձայնագրերի ստորագրման և ուժի մեջ մտնելու բոլոր ընթացակարգերը: 2016թ. համար նշված միջազգային կազմակերպություններից ներգրավված բյուջետային աջակցության միջոցները կազմում են 210 մլն ԱՄՆ դոլար և 40 մլն եվրո, իսկ 2017թ. համար՝ 170 մլն ԱՄՆ դոլար և 40 մլն եվրո: Ներգրավված միջոցները հնարավորություն են ընձեռել սահուն կերպով իրականացնել բյուջեի շրջանակներում ստանձնված ֆինանսական պարտավորությունները՝ նպաստելով նաև ՀՀ-ում ֆինանսական կայունության ապահովմանը:

Հատկապես կարևոր էր նաև «ՀՀ կառավարության և ՌԴ կառավարության միջև՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանը պետական արտահանման վարկ տրամադրելու մասին» համաձայնագրի կնքումը, որով նախատեսվում է մինչև 100 մլն. ԱՄՆ դոլարի չափով ժամանակակից սպառազինություն և տեխնիկա ձեռք բերել:



Մուդիսի կողմից՝ «B1 Stable» սուվերեն վարկանիշ

- Շարունակվել են նաև միջազգային վարկանշային կազմակերպությունների (Ֆիթչ, Մուդիս) կողմից Հայաստանին շնորհվող սուվերեն վարկանիշի վերանայման ուղղությամբ համատեղ աշխատանքները, ինչի արդյունքում

Ֆիթչի կողմից ՀՀ-ին շնորհվել է «B+ Positive», Մուդիսի կողմից՝ «B1 Stable» սուվերեն վարկանիշ, իսկ Հայաստանի տնտեսության վերաբերյալ հեռանկարը երկու կազմակերպությունների կողմից “կայունից” փոխվել է “դրականի”

ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐ ԵՎ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՔԱՐԵՐ

- Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության պետական գանձարանների միջև կնքվել է հուշագիր, որով նախատեսվել է ընդլայնել համագործակցությունը թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի շուկայի զարգացման և միասնականացման բնագավառում:

ՌԴ ֆինանսների նախարարությանը կից ՌԴ թանկարժեք մետաղների և քարերի պետական ֆոնդի ձևավորման, թանկարժեք մետաղների և քարերի պահպանման, բացթողման և օգտագործման պետական հաստատություն» դաշնային պետական հաստատության կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարի հետ ձեռք է բերվել նախնական պայմանավորվածություն հետագայում Երևան քաղաքում ցուցահանդես կազմակերպելու վերաբերյալ:

- Գանձարանի կողմից իրականացվել է պետական պահուստներում գտնվող թանկարժեք մետաղներից ու թանկարժեք քարերից պատրաստված մշակութային և բարձր գեղարվեստական արժեք ունեցող իրերի ցուցադրության կազմակերպում, մասնավորապես՝

Գանձարանի և ՀՀ կենտրոնական բանկի միջև կնքված պայմանագրի համաձայն կազմակերպվել և մինչ օրս գործում է Գանձարանի պետական պահուստներում առկա պատմամշակութային արժեք ներկայացնող ոսկուց և արծաթից պատրաստված մետաղադրամների ցուցադրությունը ՀՀ կենտրոնական բանկի «Այցելուների կենտրոնում»:

Մեծ Բրիտանիա, Էլիզաբեթ II-ի (1952թ.-) ոսկե 1 ֆունտ
1 pound of gold. Elizabeth II of Great Britain, (born in 1952)
Ցուցադրություն ՀՀ կենտրոնական բանկի «Այցելուների կենտրոնում»

«Հայաստանի պատմության թանգարան» ՊՈԱԿ-ում կազմակերպվել է Գանձարանի պետական պահուստներում առկա պատմամշակութային արժեք ներկայացնող արծաթից պատրաստված իրերի ցուցադրություն:

«Հ.Շարամբեյանի անվան ժողովրդական ստեղծագործության կենտրոն» ՊՈԱԿ-ում

կազմակերպվել է Գանձարանի պետական պահուստներում առկա արծաթից պատրաստված բարձր գեղարվեստական արժեք ներկայացնող իրերի ցուցադրություն:

- Իրականացվել է թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի պետական պահուստում առկա թանկարժեք մետաղների, թանկարժեք քարերի և դրանցից պատրաստված իրերի ֆոտոդարանի ստեղծման աշխատանքներ: Իրերը նկարահանվել և ներկայումս շարունակվում են նկարահանվել արժեքների թվային բազա ստեղծելու և ՀՀ ֆինանսների նախարարության պաշտոնական կայքէջում տեղադրվելու նպատակով: Գանձարանում առկա իրերի մոտ 40%-ը նկարահանվել և տեղադրվել են ՀՀ ֆինանսների նախարարության պաշտոնական կայքէջում:
- ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի «Թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի պետական գանձարան» գործակալության թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի պետական պահուստների արժեքների արդյունավետ հաշվառման համար իրականացվում է նշված արժեքների թվայնացում և դրանց հաշվառման ծրագրային ապահովում:
- Մշակվել և ՀՀ կառավարության կողմից հաստատվել է «Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմի «Թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի պետական գանձարան» գործակալության 2018-2021 թվականների թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի պետական պահուստների օտարման միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշումը, որով նախատեսվել է պետական պահուստից թանկարժեք մետաղներից և թանկարժեք քարերից պատրաստված իրերի օտարում:

Ցուցադրություն՝ «Հ.Շարամբեյանի անվան ժողովրդական ստեղծագործության կենտրոն» ՊՈԱԿ-ում

- Իրականացվել է թվով 87 պետական մարմինների, պետական հիմնարկների, պետական ոչ առևտրային կազմակերպությունների և 100 տոկոս պետական մասնակցությամբ իրավաբանական անձանց հաշվեկշիռներում հաշվառված թանկարժեք մետաղների, թանկարժեք քարերի, ինչպես նաև թանկարժեք մետաղներից և թանկարժեք քարերից պատրաստված իրերի հաշվառում: Կատարվել է թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի պետական պահուստի տվյալների հստակեցում: Ստացված տեղեկությունների ճշգրտում և համապատասխան էլեկտրոնային բազայում մուտքագրում:
- Գանձարանի կողմից սահմանված ժամանակահատվածում կատարվել է թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի ընդունման թվով 3 գործարք, որի արդյունքում պետական պահուստները համալրվել են թվով 128 հատ 431.95 գրամ ընդհանուր քաշով իրով, որից 123 հատ

338.7 գրամ ընդհանուր քաշով ոսկերչական իրերով, 357.9 գրամ մետաղական ոսկով, 3908.1 գրամ արծաթով, 18.7 գրամ պլատինով, 101.1 գրամ պալադիումով և 83 հատ արհեստական քարերով:

- Իրականացվել է ՀՀ թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի պետական պահուստների համալրման նպատակով թվով 471 իրերի փորձաքննություն:
- Իրականացվել է ՀՀ թանկարժեք մետաղների և քարերի ազգային պահուստի մաս կազմող թանկարժեք մետաղների և թանկարժեք քարեր պարունակող թանգարանային նմուշների թվով 133 իրի փորձաքննություն:
- Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշման ու հարգադրոշմման գործունեություն իրականացնող թվով 2 կազմակերպության համար 7 հատ տարբերանիշերի պատվիրում, տրամադրում և հաշվառում:
- Թանկարժեք մետաղների գնման և բացթողնման գների սահմանում և հրապարակում (շաբաթական կտրվածքով):
- Բնօգտագործման վճարի դրույքաչափերի հաշվարկման նպատակով՝ սև, ազնիվ, գունավոր, հազվագյուտ մետաղների և գունագեղ քարերի գների սահմանում և հրապարակում (ամսեկան և եռամսյակային կտրվածքով):
- Մետաղական օգտակար հանածոների ռոյալթիների հաշվարկման նպատակով խտանյութում պարունակվող մետաղների համար Լոնդոնի մետաղների բորսայի տվյալների հաշվարկում և հրապարակում (եռամսյակային կտրվածքով):

ՊԵՏԱԿԱՆ ԳՆՈՒՄՆԵՐ

Հանրային ֆինանսների կառավարման գործընթացում իր ուրույն տեղն է գրավում պետական գնումների համակարգը, որի միջոցով են իրականացվում պետության կողմից ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումները: Համակարգի աշխատանքի արդյունավետության բարձր մակարդակ ապահովելու նպատակով իրականացված օրենսդրական փոփոխություններով, ինչպես նաև էլեկտրոնային համակարգերի կիրառմամբ հնարավորինս թափանցիկ և հրապարակային են դարձվել գնման գործընթացները և ընթացակարգերը, ինչի արդյունքում բարձրացել է գնման ընթացակարգերին մատակարարների մասնակցության աստիճանը՝ մրցակցությունը:

Իրականացված աշխատանքները

1. Մշակվել և ՀՀ Ազգային ժողովի կողմից 2016 թվականի դեկտեմբերի 16-ին ընդունվել է «Գնումների մասին» ՀՕ-21-Ն ՀՀ օրենքը (ուժի մեջ է մտել 25/04/2017թ.), որով՝

1) նվազեցվել են գնման ձևերը, պարզեցվել են ընթացակարգերի կազմակերպման ու դրանց մասնակցության հետ կապված պայմանները, ներառյալ բացառվել է մասնակիցներին ձևական պահանջներով ծանրաբեռնելու հնարավորությունը.

Գծապատկեր 1





2) ձևավորել է գնումների արտադատական բողոքարկման գործուն և անկախ համակարգ՝ հաշվի առնելով միջազգային հաջողված փորձը.

3) գնման գործընթացների թափանցիկության և հրապարակայնության աստիճանի բարձրացման, հնարավոր կոռուպցիոն դեպքերի կանխարգելման, ինչպես նաև այդ

գործընթացների նկատմամբ քաղաքացիական հասարակության վերահսկողության աստիճանը բարձրացնելու նպատակով ներդրվել է՝

գնման գործընթացներին փոխկապակցված անձանց միաժամանակյա մասնակցությունը բացառող համակարգ,

գնման գործընթացներում պաշտոնյաների հետ փոխկապակցված անձանց գնումներին մասնակցելու դեպքերը հնարավորինս բացառող համակարգ, նախատեսելով, որ մասնակիցը հայտով կներկայացնի իրական սեփականատերերի վերաբերյալ տվյալները և եթե մասնակիցը կճանաչվի հաղթող, ապա տեղեկատվությունը կհրապարակվի ինտերնետ միջավայրում գործող գնումների պաշտոնական կայքում,

գնման գործընթացներում ներգրավված պաշտոնյաների հետ մինչև երկրորդ արյունակցական կապ ունեցող փոխկապակցված անձանց հասկացությունը և մասնակցության դեպքում ինքնաբացարկի պահանջը, ինչպես նաև շահերի բախման բացակայության մասին հայտարարությունները գնումների պաշտոնական կայքում պարտադիր հրապարակելու պահանջը,

անկախ գնման առարկայի գնից և կիրառվող գնման ձևից, պարտադիր է դարձվել պատվիրատուի կողմից պայմանագիր կնքելու մասին և կնքված պայմանագրի մասին հայտարարությունների հրապարակումը:

Նշված օրենքի հիման վրա մշակվել և հաստատվել են նաև օրենքի կիրարկումն ապահովող թվով 34 ենթաօրենսդրական ակտեր:

2. Ընդլայնվել է էլեկտրոնային գնումների համակարգը օգտագործող պատվիրատուների շրջանակը և էլեկտրոնային գնումների համակարգով իրականացվող գնումների ծավալը: Շրջանակն ընդլայնվել է և ընդգրկում է 301 պատվիրատու՝ 2016թ.-ի 110-ի փոխարեն, որոնք գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված բոլոր մրցակցային գնման ընթացակարգերն իրականացնում են էլեկտրոնային համակարգի միջոցով: Ընդ որում էլեկտրոնային համակարգի միջոցով են իրականացվում նաև հրատապության հիմքով պայմանավորված մեկ անձից գնումները: Այդ պատվիրատուների թվին են դասվում բոլոր պետական կառավարման մարմինները, քաղաքային համայնքները, պետության կողմից ստեղծված առևտրային կազմակերպությունները, հիմնադրամները:

Գծապատկեր 2



Այսինքն՝ համեմատաբար խոշոր գնումներ կատարող բոլոր պատվիրատուները ընթացակարգերը կազմակերպում և անցկացնում են էլեկտրոնային համակարգերի միջոցով:

Ձեռնարկվում են միջոցներ փոքր գնումներ կատարող մարմինների կարիքների համար գնումները ևս էլեկտրոնային համակարգ տեղափոխելու ուղղությամբ՝ հաշվի առնելով վերջիններիս կարողությունների աստիճանական զարգացումը:

Միաժամանակ Համաշխարհային բանկի համաձայնությամբ վերջինիս կողմից ֆինանսավորվող ծրագրերի շրջանակներում գնանշման հարցումները և բաց ազգային մրցույթի ընթացակարգերը ևս իրականացվում են էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով:

4. 2017թ. էլեկտրոնային գնումների համակարգում կատարված ծրագրային փոփոխությունների արդյունքում հնարավոր է դարձել՝

- էլեկտրոնային եղանակով իրականացնել պայմանագրերի արդյունքների հանձնման-ընդունման գործընթացները: Արդյունքում հնարավորինս բացառվում են պայմանագրերի կատարման արդյունքները հետին ամսաթվով ընդունելու դեպքերը, ինչն էլ հանգեցնում է պայմանագրերի պատշաճ կատարմանը, իսկ ոչ պատշաճ կատարված պայմանագրի կողմի նկատմամբ կիրառվում են համապատասխան պատասխանատվության միջոցներ,

Գծապատկեր 3



- հայտերը բացելուց հետո ինտերնետ միջավայրում ավտոմատ եղանակով հասանելի դարձնել մասնակիցների հայտերում ներառված բոլոր փաստաթղթերը: Արդյունքում բարձրացվել է գնումների ընթացակարգերի թափանցիկության և հրապարակայնության՝ հետևաբար նաև քաղաքացիական հասարակության վերահսկողության աստիճանը, ինչն էլ սահմանափակում է հայտերի գնահատման ժամանակ գնահատող հանձնաժողովների հնարավոր սուբյեկտիվ՝ այդ թվում հրավերի պահանջներին չհամապատասխանող հայտ ներկայացրած մասնակցին հաղթող ճանաչելու վերաբերյալ որոշումների կայացումը:

4. էլեկտրոնային աճուրդի համակարգի ներդրման նպատակով Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի փորձագետների հետ մշակվել է այդ համակարգի ծրագրային ապահովման ծառայությունների գնման տեխնիկական առաջադրանքը, որի հիման վրա կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում հաղթող ճանաչված կազմակերպության հետ կնքվել է պայմանագիր: Նշված պայմանագրի շրջանակում մշակվել և թեստավորվել է էլեկտրոնային աճուրդի ծրագրային ապահովումը: Նախատեսվում է համակարգը ներդնել 2018 թվականին՝ փուլային եղանակով:

5. էլեկտրոնային գնումների Armeps համակարգի նորացման նպատակով մշակվել է այդ համակարգի ծրագրային ապահովման ծառայության գնման տեխնիկական առաջադրանքը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, առանց ֆինանսական միջոցների, 23/03/2018թ. հայտարարվել է նշված ծառայության գնման բաց մրցույթ: Ներկայումս ամփոփվում է մրցույթի արդյունքները: Մրցույթի արդյունքում պայմանագիր կնքվելու պարագայում վերջինս ուժի մեջ կարող է մտնել համապատասխան ֆինանսական միջոցներ հատկացվելու և դրա հիման վրա համաձայնագիր կնքվելու դեպքում:

Դասընթաց՝ գնումների գործընթացը համակարգողների համար

6. 2017 թվականի հունիս-սեպտեմբեր ամիսների ընթացքում Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) աջակցությամբ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից շուրջ 700 գնումների մասնագետների համար կազմակերպվել են վերապատրաստումներ՝ գնումների մասին նոր օրենսդրության, էլեկտրոնային գնումների համակարգի, ինչպես նաև պլանավորման, պայմանագրերի կառավարման և հաշվետվությունների պատրաստման մոդուլների վերաբերյալ:

7. 2017 թվականի հոկտեմբերի 1-ից գործարկվել է գնումների նոր՝ www.procurement.am ինտերնետային կայքը, որի կառուցվածքը շահագործման տեսանկյունից պարզեցվել և կանոնակարգվել է: Նշված կայքը ինտեգրվել է նաև էլեկտրոնային գնումների Armeps համակարգին, որը պատվիրատուներին հնարավորություն է տալիս մեկ գործողության միջոցով ապահովել գնման հայտարարությունների ու հրավերների, դրանցում կատարված փոփոխությունների ու այդ հրավերների վերաբերյալ տրամադրված պարզաբանումների հրապարակումը՝ դարձնելով գնումների գործընթացը ավելի թափանցիկ և հասարակության ու լրատվամիջոցների համար ավելի վերահսկելի:

8. ԵԱՏՄ պայմանագրով ստանձնած պարտավորությունների շրջանակում նախատեսվում է ներդնել գնումների պաշտոնական www.procurement.am ինտերնետային կայքում հրապարակվող տեղեկատվության ավտոմատ ռեժիմում ռուսերեն լեզվով թարգմանության համակարգի ծրագրային ապահովում:

Այս կապակցությամբ կազմակերպվել է մրցույթ, որի արդյունքում հաղթող ճանաչված կազմակերպության կողմից ներկայումս իրականացվում է ծրագրային ապահովման մշակման աշխատանքները: Համակարգը նախատեսվում է ներդնել մինչև 2018թ. հուլիսի 10-ը:

ՊԵՏԱԿԱՆ ՆԵՐՔԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

Ֆինանսական կառավարում և հսկողություն

Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի փետրվարի 18-ի նիստի N 6 արձանագրության N 15-րդ կետով հավանության արժանացած արձանագրային որոշմամբ հաստատվել է Պետական ֆինանսների կառավարման համակարգի (ՊՖԿՀ) բարեփոխումների վերանայված ռազմավարությունը և 2016-2020 թվականներին ՊՖԿՀ բարեփոխումների ոլորտում իրականացվելիք գործողությունների ծրագիրը, որտեղ ներառված են նաև Պետական ներքին ֆինասական հսկողության (ՊՆՖՀ) համակարգի ռազմավարությանը առնչվող դրույթները, ինչպես նաև ՊՆՖՀ համակարգի հետագա զարգացման գործողությունների ծրագիրը:

Մասնավորապես՝ Ֆինանսական կառավարման և հսկողության (ՖԿՀ) ոլորտի մասով 2016-2020 թվականների ընթացքում նախատեսվող միջոցառումների շրջանակներում 2016 թվականին ԵՄ փորձագետների հետ համատեղ մշակվել են հետևյալ փաստաթղթերը.

1. ֆինանսական կառավարման և հսկողության (ՖԿՀ) ձեռնարկ,
2. ներքին հսկողության ստանդարտների ուղեցույց,
3. կառավարչական հաշվետվողականության մեթոդաբանության փաստաթուղթը՝ ԿՆՄ-ի կողմից հետագա օրենսդրական ակտի մշակման համար,
4. ռիսկերի կառավարման մեթոդաբանության նախագիծ՝ ֆինանսական կառավարման և հսկողության համատեքստում,

2017 թվականին Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ) և Նիդեռլանդների Թագավորության ֆինանսների նախարարության «Պետական ֆինանսների կառավարում» ակադեմիայի աջակցության շրջանակներում մեկնարկել են ՀՀ հանրային հատվածի ներքին հսկողության համակարգի բացերի վերլուծության աշխատանքները ֆինանսական կառավարման և հսկողության ոլորտին առնչվող փաստաթղթերի նախագծերը վերանայելու նպատակով: Այս աշխատանքների շրջանակում նախատեսված է, որ ներգրավված փորձագետները պետք է իրականացնեն նաև ֆինանսական կառավարման և հսկողության համակարգը կարգավորող հիմնական իրավական ակտերի նախագծերի («Ֆինանսական կառավարման և հսկողության մասին» օրենքի, ՖԿՀ ձեռնարկ, ռիսկերի կառավարման ուղեցույց և

այլն) վերանայման աշխատանքները՝ հաշվի առնելով նաև ներկայումս ծրագրային բյուջետավորման համակարգի ներդրմամբ պայմանավորված համակարգում փոփոխությունների առաձնահատկությունները: Աշխատանքների ավարտից հետո ՀՀ հանրային հատվածի առնվազն երկու կազմակերպություններում կիրականացվի դրանց պիլոտավորման և վերջնականացման աշխատանքները:

Աշխատանքներ են տարվել ՀՀ հանրային հատվածի ներքին հսկողության համակարգի բացերի վերլուծություն իրականացնելու և ՖԿՀ ուղեցույցի վերանայման ուղղությամբ: ԳՄԸՀ տեղական փորձագետի կողմից մշակվել և ներկայացրել է ՖԿՀ ուղեցույցի նախագծի նախնական տարբերակը, որը ներկայումս գտնվում է քննարկման փուլում: Հիշյալ նախագծերի փաթեթի վերանայման աշխատանքներից հետո ՀՀ հանրային հատվածի առնվազն երկու կազմակերպություններում նախատեսվում է իրականացնել ՖԿՀ համակարգի ներդրման պիլոտավորման աշխատանքներ:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾԻ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏ

1. Ներքին աուդիտի միջազգային լավագույն փորձին համապատասխան համակարգահեն աուդիտ իրականացնելու և ներքին աուդիտի ստանդարտները գործնականում կիրառելու նպատակով՝ ԳՄՀԸ կազմակերպության աջակցությամբ մշակվել և փորձարկվել է համակարգահեն աուդիտի ձեռնարկը.
2. Համաշխարհային բանկի աջակցության շրջանակներում իրականացվել է ներքին աուդիտի որակի երաշխավորման և բարելավման ծրագրի բաղկացուցիչ՝ ներքին աուդիտի արտաքին գնահատման մեթոդաբանության մշակում.
3. Մշակված ուղեցույցների վերաբերյալ կազմակերպվել է «Ներքին աուդիտի որակի գնահատում» խորագրով սեմինար՝ լիազոր մարմնի և ՀՀ կրթության և գիտության նախարարության ներքին աուդիտի ոլորտի աշխատակիցների համար.

Քննարկում ներքին աուդիտի համակարգի զարգացման վերաբերյալ

4. Մշակված մեթոդաբանությունը փորձարկելու նպատակով՝ ՀՀ ֆինանսների նախարարությունում և ՀՀ կրթության և գիտության նախարարությունում իրականացվել է ներքին աուդիտի որակի արտաքին գնահատում.

5. Համաշխարհային բանկի աջակցության շրջանակներում իրականացվել է ներքին աուդիտի ձեռնարկների և ուղեցույցների մեթոդաբանության վերանայում, նոր մեթոդաբանության մշակում.

6. ԳՄՀԸ կողմից կազմակերպվել է աշխատանքային քննարկու՝ ներքին աուդիտի ձեռնարկների և ուղեցույցների մեթոդաբանության վերանայված տարբերակի վերաբերյալ՝ ՀՀ հանրային տավածի ներքին աուդիտի ստորաբաժանումների ղեկավարների և լիազոր մարմնի ներկայացուցիչների մասնակցությամբ,

7. Ամփոփվել, կազմվել և հրապարակվել է ՀՀ հանրային հատվածի ներքին աուդիտի համակարգի 2016 թվականի հաշվետվությունը,

8. Ամփոփվել, կազմվել և հրապարակվել է ՀՀ հանրային հատվածի ներքին աուդիտի համակարգի 2017 թվականի հաշվետվությունը,

9. ՀՀ կառավարության 2018 թվականի մարտի 29-ի N 327-Ն որոշմամբ կատարվել են փոփոխություններ ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 13-ի N 176-Ն որոշման մեջ,

10. 2017 թվականին կազմակերպվել է ՀՀ հանրային հատվածի որակավորված ներքին աուդիտորների շարունակական մասնագիտական վերապատրաստման թվով 16 դասընթաց, որոնց մասնակցել է թվով 215 որակավորված ներքին աուդիտոր, ներառյալ՝ հանրային հատվածի կազմակերպություններին ներքին աուդիտի ծառայություն մատուցող կազմակերպությունների աշխատակից հանդիսացող թվով 15 որակավորված ներքին աուդիտոր.

11. 2017 թվականին կազմակերպվել են ներքին աուդիտորի որակավորման քննություններ, որոնց թվով 113 մասնակիցներից 85-ը հաղթահարել են սահմանված շեմը և ստացել ՀՀ հանրային հատվածի ներքին աուդիտորի որակավորում.

12. 2018 թվականին գնման գործընթաց է կազմակերպվել ՀՀ հանրային հատվածի որակավորված ներքին աուդիտորների շարունակական մասնագիտական վերապատրաստման դասընթացների 2018 թվականի ընթացքում կազմակերպման ծառայությունների ձեռքբերման համար.

13. ՀՀ ֆինանսների նախարարի պաշտոնակատարի 2018 թվականի ապրիլի 26-ի N 168-Ա հրամանով ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ ֆինանսների նախարարի 2014 թվականի դեկտեմբերի 17-ի N 903-Ա հրամանը և սահմանվել է ներքին աուդիտորի որոկավորման քննության կազմակերպման և անցկացման համար պատասխանատու ստորաբաժանումը, ինչպես նաև հաստատվել են պատասխանատու ստորաբաժանման աշխատողների ցանկը և գործունեության կարգը.

14. 2018 թվականին գնման գործընթաց է կազմակերպվել ներքին աուդիտի միասնական տեղեկատվական համակարգի սպասարկման ձեռքբերման համար, և պայմանագիր կնքվել հաղթող մասնակցի հետ:

ԾՐԱԳՐԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՈՒՄ

Ծրագրային բյուջետավորման համակարգի ամբողջական ներդրման աշխատանքները ավարտին հասցնելու նպատակով ԳՄՀԸ և ՀՀ ֆինանսների նախարարության հետ համատեղ մշակվել է 2017-2020 թվականներին իրականացվելիք գործողությունների ծրագիրը, ինչով պայմանավորված անհրաժեշտություն է առաջացել փոփոխություններ կատարել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի օգոստոսի 13-ի նիստի N 38 արձանագրության 12-րդ կետով հավանության արժանացած արձանագրային որոշման մեջ: Որոշումը ընդունվել է ՀՀ կառավարության 23.06.2017թ. թիվ 34 նիստի արձանագրության 26-րդ կետով:

«Հայաստանի Հանրապետությունում ծրագրերային բյուջետավորման ամբողջական ներդրման ռազմավարության» իրականացման շրջանակներում ԳՄՀԸ-ն ՀՀ ֆինանսների նախարարությանը աջակցություն է տրամադրում հետևյալ երկու բաղադրիչների շրջանակներում՝

1. **Մեթոդաբանություն և օրենսդրություն** - բաղադրիչի հիմնական նպատակն է աջակցել ՀՀ ֆինանսների նախարարությանը (ՖՆ) ծրագրային բյուջետավորման (ԾԲ) ռազմավարության և վերջինիս գործողությունների ծրագրով 2017թ.-ի նոյեմբերից մինչև 2018թ.-ի հունիս ամիսն ընկած ժամանակահատվածում նախատեսվող միջոցառումների իրականացմանը: Մասնավորապես՝ բաղադրիչի շրջանակում խորհրդատուների խումբը աջակցում է ՖՆ-ին ԾԲ մեթոդաբանության և համապատասխան իրավական դաշտի լրամշակման և վերջնականացման հարցում:

2. **Բյուջետային ծրագրերի վերանայում** - բաղադրիչի հիմնական նպատակն է աջակցել ՖՆ-ին և ոլորտային նախարարություններին մինչև 2018 թվականի ավարտը նոր մեթոդաբանության պահանջներին համապատասխան բարելավել բյուջետային փաստաթղթերում ծրագրային տեղեկատվությունը, վերանայել և թարմացնել բյուջետային ծրագրերի կառուցվածքը և բովանդակությունը:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ և ԶԱՐԳԱՑՈՒՄ

Ոլորտում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- ՀՀ-ում կենսաթոշակային բարեփոխումների շարունակական և արդյունավետ ընթացքի ապահովում, կուտակային կենսաթոշակային համակարգի ընթացիկ խնդիրների համակողմանի լուծման, բնակչության շրջանում կենսաթոշակային բարեփոխումների իրազեկվածության աստիճանի բարձրացման նպատակով ՀՀ ֆինանսների նախարարի 28.02.2017թ. թիվ 73-Ա հրամանով ձևավորվել է միջգերատեսչական աշխատանքային խումբ՝ ՀՀ ֆինանսների նախարարության, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ՀՀ կենտրոնական բանկի, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի, Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի և կենսաթոշակային ֆոնդերի ակտիվների կառավարիչների համապատասխան ներկայացուցիչների ներգրավմամբ: Հրավիրվել է աշխատանքային խմբի 6 նիստ, որի ընթացքում քննարկվել են կուտակային կենսաթոշակային համակարգի գործառնության ընթացիկ խնդիրները և դրանց լուծման ուղիները:
- Կուտակային կենսաթոշակների կարգավորման համակարգը առավել ճկուն դարձնելու, ինչպես նաև միջազգային կառույցներում աշխատող ՀՀ քաղաքացի աշխատակիցների կենսաթոշակի իրավունքի իրացման օրենսդրական հիմքեր ստեղծելու նպատակով փոփոխություններ և լրացումներ են կատարվել կուտակային կենսաթոշակային համակարգը կարգավորող օրենսդրության մեջ, փոփոխությունների փաթեթն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 17.11.2017թ. և ստորագրվել ՀՀ Նախագահի կողմից 07.12.2017թ.-ին:
- «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովելու նպատակով մշակվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի փետրվարի 2-ի N 86-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ, որը հաստատվել է ՀՀ կառավարության 31.08.2017թ. թիվ 1077-Ն որոշմամբ: Ներդրվել են էլեկտրոնային կառուցակարգեր՝ վճարները հավաքագրելու և հիմնադրամին փոխանցելու համար, ԿԲ-ի հետ համատեղ մշակվել է զինծառայողների ապահովագրության հիմնադրամի ներդրումային քաղաքականությունը:
- Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև «Հանրային արդյունավետության և կապիտալի շուկաների ծրագրի» քաղաքականության աղյուսակի «Ենթածրագիր 1»-ի շրջանակներում մշակվել է «Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության և Հայաստանի հանրապետության կենտրոնական բանկի միջև» փոխըմբռնման հուշագրի նախագիծ՝ ուղղված ֆինանսական և կապիտալի շուկայի զարգացման նպատակով

համաձայնեցված և հետևողական գործողությունների իրականացմանը: Հուշագիրը 2017թ. օգոստոսի 31-ին ստորագրվել է ՀՀ ֆինանսների նախարարի և ՀՀ կենտրոնական բանկի նախագահի կողմից:

- Կենսաթոշակային ֆոնդի մասնակիցներին մասնակիցների ռեեստրը վարողի կողմից տարեկան մեկ անգամ անվճար, մասնակցի կենսաթոշակային հաշվում արտացոլված նախորդ օրացուցային տարվա տվյալների մասին մատչելի տեղեկատվության ներկայացման անհրաժեշտությամբ պայմանավորված՝ մշակվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի մայիսի 17-ի N 629-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ, որը հաստատվել է ՀՀ կառավարության 22.02.2018թ. թիվ 193-Ն որոշմամբ:
- ՀՀ կապիտալի շուկայի զարգացման ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) մշակման նպատակով ուսումնասիրվել է ոլորտում վարվող քաղաքականության միջազգային լավագույն փորձը, վերհանվել են շուկայի զարգացմանը, մասնավորապես՝ տեղական ընկերություններ կողմից բաժնետոմսերի և պարտատոմսերի թողարկման խթանմանն ուղղված անհրաժեշտ քայլերը և միջոցառումները, սկիզբ է դրվել Ծրագրի մշակման աշխատանքներին:
- Կուտակային կենսաթոշակային համակարգը կարգավորող օրենսդրության փոփոխություններով պայմանավորված՝

✓ Մշակվել և ընդունվել է ՀՀ կառավարության 12.04.2018թ. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 4-ի N 1064-Ն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի օգոստոսի 16-ի N 1021-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 422-Ն որոշումը:

✓ Մշակվել և ընդունվել է ՀՀ ֆինանսների նախարարի 30.03.2018թ. «Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայի սկզբնական անվանական արժեքը սահմանելու մասին» N 125-Ն հրամանը:

✓ Մշակվել և ՀՀ ֆինանսների նախարարի 30.03.2018թ և N 128-Ն հրամանով և ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 27.04.2018թ. N60-Ն որոշմամբ հաստատվել է «Հաշվի օպերատորների գործառույթ իրականացնող կազմակերպություններին ներկայացվող պահանջները սահմանելու մասին» ՀՀ ֆինանսների նախարարի և ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի համատեղ հրամանը:

- Յուրաքանչյուր ամիս պատրաստվել և ներկայացվել են ՀՀ դրամավարկային քաղաքականության, ֆինանսական համակարգի և կուտակային կենսաթոշակային համակարգի վերաբերյալ տեղեկանքներ:

Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի ակտիվների մեծությունը (մլրդ դրամ)



Նպատակային (սուբսիդավորվող) վարկեր (մլն դրամ)



Գյուղատնտեսությանը տրամադրված վարկեր (մլրդ դրամ)



ԼԻՑԵՆԶԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄ

30.04.2018թ. դրությամբ ուժի մեջ են թվով **33** աուդիտորական ծառայությունների իրականացման, **5** ինկասացիոն ծառայությունների մատուցման, **4** խաղատան, **5** վիճակախաղերի կազմակերպման և **3** ինտերնետ շահումով խաղերի կազմակերպման լիցենզիաներ (ընդամենը՝ **50**) և թվով **654** ծանուցման ենթակա գործունեության իրականացման համար հաշվառված անձինք:

1. Ընդհանուր առմամբ գանձվել է **12.170.600.580** պետական տուրք, որից՝

- Խաղատներ – 7.495.170.779 ՀՀ դրամ
- Վիճակախաղեր – 3.000.750.000 ՀՀ դրամ
- Ինտերնետ շահումով խաղեր – 1.500.010.000 ՀՀ դրամ
- Աուդիտորական ծառայությունների իրականացում – 14.857.726 ՀՀ դրամ
- Ինկասացիոն ծառայությունների մատուցում– 2.555.500 ՀՀ դրամ
- Ծանուցման ենթակա գործունեության իրականացում – 157.256.575 ՀՀ դրամ:

Լիցենզավորման պայմանների և պահանջների հսկողություն

ՀՀ ֆինանսների նախարարությունը վերահսկողություն է իրականացնում ՀՀ-ում գործող թվով 4 խաղատների, 5 վիճակախաղերի, 3 ինտերնետ շահումով խաղերի, 5 ինկասացիոն ծառայություններ մատուցող կազմակերպությունների և 31 աուդիտորական կազմակերպությունների նկատմամբ:

1. Տեղում ստուգումներ

Տեսչության կողմից տեղում ստուգումներ են իրականացվել ընդհանուր թվով 12 ընկերություններում, որոնցից թվով 4 վիճակախաղերի, թվով 7 խաղատների և թվով 1 աուդիտորական կազմակերպման լիցենզիաների պայմանների և պահանջների ստուգումներ, որոնց արդյունքում, որպես պատասխանատվության միջոցներ կիրառվել է թվով 7 նախազգուշացում և ընդհանուր թվով 22.200.000 ՀՀ դրամի չափով տուգանքներ, որոնցից՝ վիճակախաղերի կազմակերպիչների նկատմամբ թվով 4 նախազգուշացում և 4.300.000 ՀՀ դրամ տուգանք և թվով 1 կասեցման համար հիմք հանդիսացող խախտման կատարոման արձանագրում, խաղատների կազմակերպիչների նկատմամբ 17.900.000 ՀՀ դրամ տուգանք: Թվով 1 ստուգման մասով արդյունքները դեռևս ամփոփման փուլում են:

2. Փաստաթղթային ստուգումներ

Տեսչության կողմից ընդունվել են ընդհանուր թվով 396 հաշվետվություններ (տեղեկություններ), որոնց ուսումնասիրության արդյունքում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում ուշ ներկայացնելու և հաշվետվություններում առկա անհամապատասխանությունների հետևանքով, որպես պատասխանատվության միջոցներ թվով 1 խաղատան նկատմամբ կիրառվել է նախազգուշացում, իսկ թվով 3 ընկերության տնօրենի նկատմամբ 300.000 ՀՀ դրամ տուգանք, աուդիտորական կազմակերպությունների նկատմամբ թվով 8 նախազգուշացում և 1.400.000 ՀՀ դրամ տուգանք:

Վիճակախաղերի կազմակերպիչների կողմից «Վիճակախաղերի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի պահանջը խախտելու հիմքով կիրառվել է 3.700.000 ՀՀ դրամի չափով տուգանք:

ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Լիցենզավորման բնագավառում որակավորման ստուգումներն առավելագույնս թափանցիկ և պարզ ընթացակարգով իրականացնելու նպատակով մշակվել և ՀՀ կառավարության

հավանության են առժանացել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի փետրվարի 3-ի N 123-Ն որոշման մեջ լրացում և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը (ՀՀ կառավարության 9 մարտի 2017 թվականի N 227-Ն):

2. «Ինկասացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2016 թվականի սեպտեմբերի 28-ի ՀՕ-139-Ն օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումը հաստատելու մասին» N 121-Ա որոշման մշակվել և ՀՀ կառավարության հավանության են առժանացել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 2302-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը (ՀՀ կառավարության 16 մարտի 2017 թվականի N 259 - Ն որոշում):

3. «Շահումով խաղերի և խաղատների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-149-Ն Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումը հաստատելու մասին» N 1192-Ն որոշման մշակվել և ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացվել է ««Շահումով խաղերի և խաղատների կազմակերպիչների կողմից մեկ միլիոն դրամից ավելի գործարքներ իրականացնող հաճախորդների նույնականացման, տվյալների շտեմարանի ստեղծման և պահպանման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը (ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 20-ի N 411-Ն որոշում):

4. Մշակվել և 2017 թվականի 20 հուլիսի N 834-Ա ՀՀ կառավարության որոշմամբ հավանության է արժանացել «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը, որն էլ սահմանված կարգով ներկայացվել է ՀՀ ազգային ժողով (ՀՕ 911-Ն, ընդունվել է դեկտեմբերի 13-ին): Սույն օրենքով սահմանվում է ՀՀ կառավարության կողմից հավանության արժանացած 40 միլիարդ դրամից ավելի ներդրումային ծրագրերի շրջանակներում խաղատուն և (կամ) շահումով մեքենայացված խաղ և (կամ) անմիջականորեն (խաղասրահի միջոցով) ինտերնետ շահումով խաղերի կազմակերպում ոչ միայն

միանձնյա ներդրողի, այլև համատեղ ներդրում կատարողներից մեկի կողմից՝ մյուս համաներդրողների գրավոր համաձայնության դեպքում:

5. Մշակվել և ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացվել է «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Վիճակախաղերի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Գովազդի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերը, որոնց համաձայն՝ խաղատան կազմակերպման և շահումներով խաղերի կազմակերպման լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների փոխարեն նախատեսվում է մեկ լիցենզավորման ենթակա գործունեության տեսակ (խաղատների կազմակերպում), ինչպես նաև պարզեցվում է տվյալ գործունեության լիցենզավորման ընթացակարգը: Նախագծերով սահմանվում է, որ վիճակախաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների կազմակերպիչները ՀՀ օրենքով սահմանված հաշվետվությունները (այսուհետ՝ Հաշվետվություններ) և լիցենզիա ստանալու համար հայտերը և կանոնակարգերը (այդ թվում՝ փոփոխութունները) կներկայցնեն էլեկտրոնային եղանակով: Նախագծով առաջարկվում են նաև այլ փոփոխություններ և լրացումներ, որոնք ուղղված են բնագավառի կարգավորմանը, վերահսկողության արդյունավետության բարձրացմանը: Մասնավորապես՝ սահմանվում է ՀՀ տարածքում օտարերկրյա պետություններում կազմակերպված ինտերնետ շահումով խաղերի կազմակերպիչների կայքերի արգելափակման պահանջը:

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հարկային օրենսդրության կատարելագործման, օրենսդրության միասնականացման, ներդրումային միջավայրի համար առավել գրավիչ հարկային օրենսդրություն ստեղծելու նպատակով 2016 թվականին ՀՀ ազգային ժողովի կողմից ընդունվել է ՀՀ հարկային օրենսգիրքը:

Հարկային օրենսդրության կատարելագործման շարունակական աշխատանքների շրջանակներում ՀՀ հարկային օրենսգրքով ամրագրված կարգավորումների էլ ավելի կատարելագործման աշխատանքներն համակարգելու նպատակով 2016 թվականին ստեղծվել է եկամուտների կատարելագործման ընդլայնված խորհուրդ: Խորհրդի անդամների կողմից ներկայացված առաջարկությունների հիման վրա մշակվել է «ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ, որով առաջարկվել է օրենսգրքի 65 հոդվածներով սահմանված 131 իրավական նորմերում, որն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից և ուժի մեջ է մտել 2018 թվականի հունվարի 1-ից:

Ներկայումս շարունակվում են հարկային օրենսդրության կատարելագործման ուղղությամբ իրականացվող աշխատանքները, որոնց հիմնական նպատակ է էլ ավելի ընդգծված ձևով փոխել հարկման վեկտորի ուղղվածությունը՝ ուղղակի հարկերով հարկման մոդելից անցում կատարելով անուղղակի հարկերով հարկման մոդելին:

Անշարժ գույքի հարկման համակարգի բարեփոխումների ուղղությամբ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից միջազգային փորձի ուսումնասիրության և ՀՀ իրականության հետ համադրման արդյունքում մշակվել և կառավարության քննարկմանն է ներկայացվել բարեփոխումների հայեցակարգային առաջարկությունների նախագիծ, որի նպատակն է եղել մշակել և ներդնել անշարժ գույքի հարկման հորիզոնական և ուղղահայաց արդար մեխանիզմներ, անշարժ գույքի հարկման բազայի որոշման ներկայում գործող կադաստրային արժեքից անցում կատարել շուկայական գնին մոտարկված արժեքին, խթանել պարապուրդում գտնվող գույքի մասնակցությունը տնտեսությունում ավելացված արժեքի ստեղծմանը, բնակելի անշարժ գույքի պրոգրեսիվ հարկման մեխանիզմով ապահովել հարկային բեռի բաշխման արդարացիությունն ու հավասարությունը և վերջապես պահպանել գործող օրենսդրությամբ չհարկվող շինությունների քանակը՝ լրացուցիչ հարկային մուտքեր ապահովելով բացառապես «բարձրարժեք» գույքի հարկումից:

Եկամուտների քաղաքականության կատարելագործման ընդլայնված հասարակական խորհրդի նիստ

Նշյալ թիրախի իրագործման նպատակով մշակվել և ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ, որը դեռևս քննարկումների փուլում է:

Եվրասիական տնտեսական միության հետ համագործակցության ուղղությամբ ապահովվել է մասնակցություն՝

1) Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մշակման աշխատանքներին, ինչպես նաև օրենսգրքի կիրարկումն ապահովող ԵԱՏՄ տարածքում, այդ թվում նաև՝ Հայաստանի Հանրապետությունում կիրառման ենթակա, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի մոտ 50 որոշումների նախագծերի մշակման և քննարկման աշխատանքներին,

2) «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի կատարելագործման աշխատանքներին,

3) Հայաստանի Հանրապետության համար կարևոր նշանակություն ունեցող ԵԱՏՄ շրջանակներում կիրառման ենթակա մի շարք համաձայնագրերի և պայմանագրերի մշակման և քննարկման աշխատանքներին,

4) հավաքագրվող մաքսատուրքերի՝ ԵԱՏՄ անդամ պետությունների միջև բաշխման նորմատիվների փոփոխության նպատակով 2017 թվականի հոկտեմբերի ամսին Ռուսաստանի Դաշնությունում, ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարությունում կազմակերպված՝ նորմատիվների հաշվարկման և քննարկման աշխատանքներին: Նշյալ թիրախի իրագործման արդյունքում, մասնավորապես, ՀՀ համար նախատեսված նորմատիվը՝ 1.22 տոկոսը, պահպանվել է:

2017 թվականի սկզբից նախարարությունը ակտիվորեն ներգրավված է ԵՄ Խորհրդի Վարքի կանոնագրքի (Բիզնես հարկեր) խմբի կողմից մշակված՝ ԵՄ անդամ պետությունների հետ ոչ համագործակցող երկրների դասակարգման գործընթացում:

Ակտիվ աշխատանքներ են կատարվել Տնտեսական համագործակցության զարգացման կազմակերպության հարկման նպատակով թափանցիկության և տեղեկությունների փոխանակման Գլոբալ ֆորումին անդամակցության աշխատանքների շրջանակներում:

Ակտիվ աշխատանքներ են կատարվել BEPS գործողությունների իրագործման և տեղայնացման աշխատանքների շրջանակներում:

Իրականացվել են մի շարք երկրների հետ կրկնակի հարկումը բացառելու համաձայնագրի շուրջ բանակցություններ:

Վերոնշյալ աշխատանքների արդյունքում.

ա. ՀՀ-ն ներառվել է 2017 թվականի կտրվածքով ԵՄ դասակարգմամբ ԵՄ-ի հետ համագործակցող երկրների ցանկում:

բ. ամփոփվել են Գլոբալ ֆորումի քարտուղարության կողմից ներկայացված հարցաշարերի վերաբերյալ շահագրգիռ մարմինների կողմից ներկայացված առաջարկությունները և ներկայացվել քարտուղարություն: Այնուհետև 2017 թվականի մայիս ամսին կազմակերպվել է Տնտեսական

համագործակցության զարգացման կազմակերպության հարկման նպատակով թափանցիկության և տեղեկությունների փոխանակման Գլոբալ ֆորումի քարտուղարության փորձագետների առաջին այցը Հայաստան՝ գնահատելու տեղեկությունների փոխանակման միջազգային ստանդարտներին ՀՀ իրավական համակարգի համապատասխանության մակարդակը: Հաջորդը քայլը փորձագետների կողմից ներկայացված նկատառումների հիման վրա համապատասխան օրենսդրական փաթեթի մշակումն է:

գ. կատարված աշխատանքների շնորհիվ 2017 թվականի հունիս ամսին ստորագրվել է «Հարկման բազայի քայքայումը և շահույթի տեղափոխումը կանխելու նպատակով հարկային պայմանագրին առնչվող միջոցառումների իրականացման վերաբերյալ» բազմակողմ կոնվենցիան, որն աննախադեպ հնարավորություններ է ստեղծում միջազգային հարկային հարաբերությունների կարգավորման դաշտում:

դ. Ս.թ. փետրվար ամսին Երևանում նախաստորագրվել է Իրաքի հետ կրկնակի հարկումը բացառող համաձայնագիրը,

ե. ակտիվ բանակցությունների փուլում է ԱՄՆ-ի հետ կրկնակի հարկումը բացառող համաձայնագրի ստորագրման գործընթացը,

զ. ներկայումս բանակցությունների վերաջնական փուլում է Ղրղզստանի Հանրապետության կրկնակի հարկումը բացառող համաձայնագրի կնքման աշխատանքները, ինչպես նաև շարունակվում են Իրաքի, Մեքսիկայի և Սինգապուրի հետ բանակցությունները:

Միաժամանակ շարունակվում են աշխատանքները՝

ա. ՏՀԶԿ-ի «Հարկվող բազայի խեղաթյուրում և շահույթի տեղաշարժ (արտահանում)» ծրագրին (BEPS ծրագիր) ՀՀ անդամակցության ուղղությամբ,

բ. միջազգային լավագույն փորձին համահունչ էլեկտրոնային առևտրի շրջանակներում առաջացող հարկային հարաբերությունների իրավակարգավորման ուղղությամբ,

գ. մի շարք պետությունների հետ կրկնակի հարկումը բացառող համաձայնագրերի ստորագրումն (ուժի մեջ մտնելն) ապահովելու ուղղությամբ.

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾԻ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ

1. Հիշյալ ժամանակահատվածում մասնավոր հատվածի հաշվապահական հաշվառման և աուդիտի ոլորտներում նշանակալի ձեռքբերումը նոր քաղաքականության որդեգրումն էր, որն իր արտացոլումն է գտել հաշվապահական հաշվառման և աուդիտի ոլորտների բարեփոխումների հայեցակարգում: Հայեցակարգի հիմնական գաղափարը կարգավորման և վերահսկողության նոր՝ «մասնագիտական կառույց-հանրային վերահսկողություն» մոդելի ներդրումն է, ինչի արդյունքում պետության կողմից ներկայումս իրականացվող մի շարք գործառույթներ կպատվիրակվեն նոր ստեղծվող մասնագիտացված կառույցին՝ հաշվապահների և աուդիտորների պալատին: Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության ոլորտի բարեփոխումների հայեցակարգը ավելի քան մեկ տարվա հանրային լայն քննարկումներից հետո ամբողջականացվել է և 2017թ. դեկտեմբերին հավանության արժանացել ՀՀ կառավարության կողմից:

Հայեցակարգում անդրադարձ է կատարվել բարեփոխումների առաջարկվող ուղղություններին՝ հաշվի առնելով ներկայումս ընդունված միջազգային լավագույն փորձը, առաջարկվել է հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության ոլորտների կարգավորման ու դրանց նկատմամբ վերահսկողության նոր՝ «Մասնագիտացված կառույց (Պալատ)» – «Հանրային վերահսկողության խորհուրդ» մոդելը:

Ըստ էության, նախատեսվում է տարանջատել ոլորտների կարգավորման և վերահսկողության գործառույթները՝ դրանք պատվիրակելով երկու մարմինների: Կարգավորման գործառույթն իրականացնելու համար օրենքով պետք է ստեղծվի մասնագիտացված կառույց՝ Հայաստանի որակավորված հաշվապահների և աուդիտորների պալատ, իսկ վերահսկողությունն իրականացվելու է Հանրային վերահսկողության խորհրդի կողմից, որը լինելու է ՀՀ ֆինանսների նախարարությանը կից հասարակական հիմունքներով գործող մարմին:

Հայեցակարգով առաջարկվող բարեփոխումների առանքցային ուղղություններից է հանդիսանում, աուդիտի որակի վերահսկողության համակարգի ներդրումը, որի նպատակը ֆինանսական հաշվետվողականության թափանցիկության և տեղեկատվության արժանահավատության կարևոր գրավականն է:

Բարեփոխումների շարունակականությունն ապահովող հաջորդ քայլը հայեցակարգից բխող օրենսդրական փաթեթի մշակումն էր: Հիշյալ փաթեթը, որը բաղկացած է 6 օրենքների նախագծերից, սույն թվականի ապրիլ ամսին ներկայացվել է շահագրգիռ պետական մարմինների քննարկմանը:

2. Հանրային հատվածի կազմակերպություններում հաշվապահական հաշվառման նոր համակարգի ներդրումը սկսվել է 2016թ. հունվարի 1-ից, սահմանված ժամանակացույցին համապատասխան, ըստ որի 01.01.2016թ.-ից նոր համակարգին անցում են կատարել թվով 16 նախարարություններ, գերատեսչություններ և նրանց ենթակա ՊՈԱԿ-ներ: 2017թ. հունվարի 1-ից հանրային հատվածի հաշվապահական հաշվառման նոր համակարգին անցում են կատարել թվով ևս 24 պետական կառավարման մարմիններ և նրանց ենթակա ՊՈԱԿ-ներ:

Հաշվապահական հաշվառման և աուդիտի ոլորտների բարեփոխումների վերաբերյալ աշխատաժողով

3. 2017 թվականի ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից մշտադիտարկման են ենթարկվել 2016թ. հունվարի 1-ից հանրային հատվածի հաշվապահական հաշվառման նոր համակարգին անցում կատարած թվով 16 կազմակերպությունների ֆինանսական հաշվետվություններն ու ներկայացված հաշվապահական տեղեկատվությունը: Մշտադիտարկման աշխատանքների արդյունքները մասնագիտական հանրային իրազեկում ապահովելու նպատակով ձեռնարկվել է «Մասնագիտական տեղեկատու» պարբերականի հրապարակումը, որում ներկայացվում է ինչպես հանրային հատվածի հաշվապահական հաշվառումը կարգավորող օրենսդրության փոփոխությունների և օրենսդրական նախագծերի վերաբերյալ տեղեկատվություն, այնպես էլ հանրային հատվածի կազմակերպություններում հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի նկատմամբ իրականացված մշտադիտարկման արդյունքում վերհանված առանձին անճշտությունների և սխալների, դրանց ուղղման ուղղությամբ գործնական առաջարկների վերաբերյալ տեղեկատվություն՝ հանրային հատվածի կազմակերպություններին գործնական աջակցություն ցուցաբերելու նպատակով:

2018թ.-ից նոր համակարգին անցում են կատարել ուժային նախարարություններն ու կառույցները, ինչպես նաև մարզպետարաններն ու համայնքները:

Այս տարի ազդարարվել է հանրային հատվածի հաշվապահական հաշվառման բարեփոխումների երկրորդ փուլի իրագործման մեկնարկը (միջանկյալ համախմբման գործիքակազմի իրավակարգավորումների մշակում և ներդրում), որը նախատեսվում է ավարտել 2019թ. տարեվերջին: Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման նոր համակարգի ներդրման երկրորդ փուլով նախատեսվում է նախարարությունների մակարդակով միջանկյալ համախմբման գործիքների և մեթոդաբանության մշակման աշխատանքների իրականացում, որը ենթադրում է իրավակարգավորման համապատասխան գործիքակազմի մշակում և հարակից օրենսդրության

վերանայում: Երկրորդ փուլի նպատակը նախարարությունների մակարդակով համախմբված ֆինանսական հաշվետվությունների ստացման ընթացակարգերի ձևավորումն է:

Ներկայումս ՀՀ-ում ինչպես հանրային հատվածի կազմակերպությունների, այնպես էլ ամբողջ պետության մակարդակով բացակայում է հաշվեգրման հիմունքով ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման մշակույթը (օրինակ՝ բացակայում է պետական հատվածի «հաշվեկշիռը», որը կներկայացներ պետության ակտիվների ու պարտավորությունների վերաբերյալ համապարփակ արժանահավատ տեղեկատվություն): Հանրային հատվածի համար պատրաստվում են դրամական հոսքեր ներկայացնող հաշվետվություններ, որից «ամենահանրահայտը» պետական բյուջեն է, իսկ բյուջետային ծախսերը ինչ արժեքի են վերածվում հանրային հատվածում հայտնի չէ, ինչն ակնհայտորեն խեղում է նաև հանրային հատվածի ֆինանսական հաշվետվողականությունը և կարգապահությունը:

Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման համակարգի բարեփոխումները կոչված են ՀՀ հանրային հատվածում աստիճանաբար ներդնել հաշվեգրման հիմունքով առանձին և համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման մշակույթը: